

ՀԱՆԴԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Տ Ա Ր Ե Ր Ի

Կ Ե Ն Դ Ա Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

(Տես էջ 142)

Ը. Շ Ն Չ Ա Ռ Ո Ւ Թ Ի Ի Ն



ՇՉԱՌՈՒԹԻՒՆՆ գործառնութիւն մի է՝ որ օդայ և կենդանեաց մարմնոյն մէջ գտնուող կազերու փոխանակութեամբ 'ի գործ կը գրուի: Կատարեալ ըլլալու համար՝ երկու գործողութիւնք կը պահանջէ, ներշնչութիւն և շնչարձակութիւն: Այս գործառնութիւնն որ կենդանեաց մէջ 'ի կարեւորագոյնից մին է՝ սննդեան մեծապէս կ'օգնէ: Արիւնն որ կենդանական կենաց գործողութիւնքն կատարելով ապականած է և իւր սնուցիչ գորութիւնքն կորուսած, գործառնութեանս ձեռք կը նորոգուի և կը կենդանանայ:

Բայց որպէս զի շնչառութեան վրայ աւելի պայծառ գաղափար ընծայեմք ընթերցողաց, նախ համառօտ կերպով հոս մթնոլորտային օդոյ վրայ կ'ուզեմք խօսիլ:

67. Մթնոլորտային օդ. — Մեր երկրագունտը շրջապատող հոսանուտն՝ մթնոլորտային օդ կ'անուանի: Գլխաւորաբար բորակածնի և թթուածնի խառնուրդ մի է, սակայն իւր մէջ կը բովանդակէ նաև ամթածնական թթուութեան, յրեղէն գոլորչիք, զանազան կազային բաղաւորութիւնք, և 'ի վեր քան զամենայն՝ հանքային և գործարանուոր մարմնոց անթիւ մասունք: Յիշատակեալ մարմնոց մէջ ստուգիւ կենդանեաց շնչառութեան ծառայողն թթուածինն է, որոյ կատարած պաշտօնն ստորագրեմք:

Երակային արիւնն որոյ մէջ լուծուած են ամթածնական թթուութեան և սակաւ ինչ բորակածին և թթուածին, երականքը ձեռք շնչառութեան գործարանաց համեմտով օդոյ ազդեցութիւնն կը կրէ: Հոն զամթածնական թթուութեան, զբորակածին և զթթուածինն արտաքս

կու տայ, և անոնց տեղ օդէն թթուածին և գոյն ինչ բորակածին կ'ընդունի: Թթուածինն զարիւն 'ի շնչերակային կը փոխարկէ, սեփական կենդանի գոյն մի պարզեւելով անոր: Մի և նոյն ժամանակ արեան մէջ գտնուող յրեղէն գոլորչեաց մի մասն կը ցնդի, զոր բոքային արտաշնչութիւն կ'անուանենք:

Ինչպիսիք ժամանակաւ կը կարծէին թէ ամթածնական թթուութեան շնչառութեան գործարանաց մէջ կը ձեւանայ, համարելով որ երակային արեան ամթածնին՝ թրքերու մէջ միայն ուղղակի օդոյ թթուածնոյն հետ կը բազազրի: Սակայն այս կարծիքն որդի ժամանակներս ընդունելի չէ. ամթածնի կիզումն սուկապէս թրքերու մէջ չի կատարիր, այլ արեան շրջանի գործարանաց ամենայն մասանց մէջ տեղիք կ'ունենայ: Երակային արիւնն որ կենդանեաց մարմնոյն զանազան մասերէն դէպ 'ի շնչառութեան գործարանքն կը հասնի, արդէն իսկ իւր մէջ ամթածնական թթուութեան կը բովանդակէ, և շնչառութեան միջոց կենդանիք գլխաւորաբար զթթուածին կը ներշնչեն, և և իրենց արեան մէջ լուծուած ամթածնական թթուութեան արտաքս կու տան:

Ինչպէս ըսինք, օդոյ մէջ գտնուող տարբ. բացմէ միայն թթուածինն է որ կենդանեաց շնչառութեան կը ծառայէ. հետևաբար՝ ստունք ներշնչութեամբ մեծաքանակ թթուածին կը սպասեն և ամթածնական թթուութեան կը շնչարձակեն: Ընդ հակառակն բոյսը՝ արեգակնային լույսոյ ազդեցութեամբ՝ անբաւ ամթածնական թթուութեան կը ներշնչեն և թթուածին արտաքս կու տան. որով օդն անբնական հաստատարակութեան մէջ է: Վասն զի կենդա-

նեաց շարունակ շնչարձակած անխածնական թթուութան՝ բուսոց շնչառութեան կը ծառայէ. և բուսոց արտաքս սուսած թթուածինն՝ կենդանեաց շնչառութեան կը նպաստէ:

68. Շնչարձակեալ օդն՝ ներշնչեալ օդէն՝ հետեւեալ յատկութեամբ կը տարբերի:

Ա. Արտաքին օդոյ բարեխառնութիւնն ինչ որ սլ ըլլայ՝ շնչարձակեալ օդն գրեթէ արեան ներմութիւնն ունի, այսինն է հարիւրամասն ներմաշափով 36° - 40° է:

Բ. Արշափ որ արտաքին օդն չոր ըլլայ՝ շնչարձակեալ օդն ջրեղէն դոփորչեօք յագեալ կամ գրեթէ յագեալ է:

Գ. 100 մաս ստփորական օդ, 21 թթուածին կը բովանդակէ, 79 քորակածին, և 3 հարիւրորդ անխածնական թթուութան ամբողջ մի 100. մինչդեռ շնչարձակեալ օդն գրեթէ 4-7 մասն անխածնական թթուութան կը բովանդակէ, և 15-16 մասն թթուածին. իսկ քորակածնի քանակութիւնն՝ քիչ և կամ ամենեւին այլափոխութիւն չի կրեր: Այելի պարզ խօտելով, շնչառութեան ծառայող օդն 5 առ 100 անխածնական թթուութան կը վաստակի և 5 առ 100 թթուածին կը կորսնցընէ:

Արանցմէ զատ, շնչարձակեալ օդն դանազան քանակութեամբ կենդանական նիւթեր կը բովանդակէ՝ որք տարբարալիսելու վրայ են:

69. Եթէ կամենանք փորձով ցուցընել մեր անխածնական թթուութան և ջրեղէն գոլորչեօք շնչարձակելն, անխածնական թթուութան համար կ'առնունք յատկ և պայծառ կրաջուր, և սարկեալ խողովակաւ ասոր մէջ կը շնչենք. կրաջուրն իսկոյն կը սլտարի՝ իւր մէջ անշուծանելի անխածնաւու ձևանալուն պատճառաւ: Գիւրազոյն և ջրեղէն գոլորչեօք գոյութիւնն ցուցընել եթէ վարկեան մի ևս պար մարմնոց մի վրայ շնչելու ըլլանք, վասն զի մէկէն ջրեղէն գոլորչեօք կը ծածկուի:

70. Յայտ է թէ շնչառութեան ձեռք ամենայն կենդանիք մի և նոյն քանակութեամբ օդ չեն սպառեր: Յամբարայիք ջրային կենդանիներէ աւելի երազ շնչառութիւն ունին. և այս շարժմանց երազութեան հետ սերմաւ կապակցեալ է: Գորտն որ քիչ անգամ և գանդաղութեամբ կը չարժի, քան զերսագալարժ թիթեանն աւելի նուազ օդ կը սպառէ: Օղջ սպառուն զանակն՝ նաև նոյն անհաստի մէջ իսկ ըստ զանազանութեան պարագայից կը տարբերի:

71. Գիւրտընալ գործարարք. — Ըստ գաւաղանութեան կենդանեաց՝ իրենց շնչառութեան գործարանքն սլ կը տարբերին: Ոմանք ազատ օդ կը շնչեն, որով և օդային շնչառութիւն ունին. այլք ջրոյ մէջ լուծեալ օդ կը շնչեն, և հետևաբար ջրային շնչառութիւն ունին:


Օդային շնչառութիւն ունեցող կենդանեաց չորժարանքն են քոյ (Ստանուրաց, թռչնոց),

քոյրային պարկը (Ջեռնոց), և շնչանօրք (Մէլատոց):

Իսկ ջրային շնչառութիւն ունեցող կենդանեաց գործարանքն են խոիկը (Ջիւսնց) և չրատար անօրք (Որդանց):

Բաց ասանցմէ՝ այն ավէն կենդանիք որ վերոյիշեալ գործարանքն չունին, իրենց շնչառութիւնն մարմնոց մակերևութիւ կը կատարեն, կամ թէ ըսենք, այն ստորնագոյն դասու կենդանիք՝ մտքային շնչառութիւն մի ունին:

72. Թորք. — Թորքերն Ստանուր կենդանեաց մէջ, որոց Եօրինակ կ'առնունք զՄարդս, շնչառութեան ծառայող էական և անըզմիջական գործարանքն են: Սպիգամանն, կակուզ, ճընչական և ընդգլմտող երկու զանգուածներէ կը բաղկանան (ՉԼ 51), որք կրծային խոռոչի (կամ




ՉԼ 51. Թորք և Շնչափող (Թորքերու մի ամբողջ թոքուած է, միւսն բացուած ցնցուղներու ճիւղաւորութիւնն ցուցընելու համար)

- 1. Խոռոչափող: 2. Շնչափող: 3. Ամբողջական թորք: 4. Գնցուղք: 5. Գնցուղներու բաժանումն: 6. Գնցուղային ճիւղիկք:

քոյրատն) այն մասին մէջ զետեղուած են՝ ուր սիրտ, արիւնակալ անօթք, կրծափող և ստուգն չեն գրաւեր: Ասոնք որով երկու կողմերն են, աւելիախալ ցնցուղներէ, Թորքերակներէ, և թորքային շնչերակներէ: Սպիրտարար իրենց գրաւած խոռոչներուն նման կոնաձե են. լայն և բարձր արմատ մի ունին՝ որով առաջատար կորնթարգութեան վրայ կը հանգչին. իսկ իրենց կորնթարգ շրջապատն՝ կողերու խոռոչն կը լնու:

Ազակողման թորքն որ ձախակողմանն են աւելի լայն և կարճ է, երկու խոտոր ճեղքերով երեք անհասարար թորքայիթ կը բաժնուի. իսկ ձախակողմանն մի ճեղքով երկու թորքայիթ կը կազմէ: Իւրաքանչիւր թորքայիթ դուս փոքրագոյն թորքայիթներ կրնայ բաժնուիլ, որք

խորշային հիւստածով և ամենայն մասանց մէջ ուղղեալ անօթներու ձեռք իրերաց հետ կը միանան: Թոքերու խորշային վիճակ ունենալն իրենց հիւստածոց մէջ տարածուած անթիւ խորշերէ կամ փամփուշտներէ յառաջ կու գայ. այս խորշերն ամէնքն ալ փոփոխակի հաղորդակցութիւն ունին, և ասոնց վրայ տարածուած են ցնցղային, երակային և շնչերակային նրբագոյն ճիւղաորութիւնք, և ինչպէս որովայնի աղիք ներաթաղանթիւ պատեալ են, այսպէս նաև իւրաքանչիւր թոք՝ քրքարաղանջի պատած է: Թոքաթաղանթին թաղանթային պարկի տեսակ մի է և շոտ թաղանթաց կը նմանի. թոքերու ամէն մասն կը պատէ՝ բաց իրենց խորիւնէն:




Չև 52. Կրծից առաջակողմն

- 4. 2. Կրծոսկր. 5. Մտնոցը յառելուած: 6. Կազմուածք լիւսեան առաջին թիկնային ողին: 7. Կազմուածք լիւսեան երկրորդականերորդ թիկնային ողին: 8. Առաջին կող: 9. Անոր գլուխ: 10. Անոր պարանոցն: 11. Անոր խորտարբար մասն: 12. Եթններորդ յեախն կող կրծոսկրային: 13. Կղանձաւ եօթներորդ կողի: 14. Կրկու յեախն ստա կողք:

Ուրեմն, թոքերն կրծային խոռոչի (կամ թոքոսի) մէջ զետեղուած են: Այս խոռոչն առջևէն զէպ'ի յետ ճնշեալ կանի մը ձև ունի. որոյ խորիւրան զէպ'ի վար և զէպ յառաջ հակեալ է, մինչդեռ յապստեալ զագաթն զէպ'ի վեր կը նայի: Կողերու միութենէ կը ձևանայ (Չև 52. 6, 8) որք յետուստ ողնայարի թիկնային ողանց վրայ յեցած են, և զէպ յառաջ դարձած անձուայ (Չև 52. 11) ձեռք կրծոսկրի վրայ կը հաստատուի: Կրծոսկրն յառաջակողմնէ զէպ յետ տափկած և երկնցած է, վերին մասն լայն և ստորին ծայրն նեղ (Չև 52. 1, 2, 3): Իսկ դատարկ միջոցն գոր կողերն իրենց մէջ կը թողուն, մէկ կողէ մինչև ցմբան տարա-

ծուող մկուռներէ ծածկուած են. այս մկուռներն շնչառութեան միջոց իրենց ձգտականութեամբ՝ կողերու ընկալանելուն կը նպաստեն: Հոսկ ուրեմն լանջաց, կամ թէ ըսնէք՝ կրծային խոռոչի ստորին մասն առաջատար կը ծածկուի. մինչայն մինչացանկ մի՝ որ լանջոց ստորին և զերաց վրայ միացած է, և բաց 'ի շնչառութեան նպաստելով միանգամայն վերին աղիքներն յընդերաց կը բաժնէ:

73. Թոչուռք և Ստնաորաց նման օդային շնչառութիւն ունին, և անոնց պէս թոքերով կը կատարեն: Այս թոքերն եռանիւնային տարանկիւնաձև են, և 'ի թոքարոյթս չեն բաժնը. սիր: Իրենց երկայն ծայրն որ ողնայարի երկայնութեան կը համապատասխանէ՝ ուղիղ և ըստուար է. և որչափ թուով կողերու առջևէն անցնելու որ ըլլայ, այնքան ճեղքեր բաժնուելով՝ անոնց մէջ գտնուող անջրպետքն կը ընտանակից կը հետևի որ նոյն եզերքն ըստ տեսակաց շորսէ մինչև եօթն ծայք կրնայ ունենալ: Իսկ ստորին հակառակ եզերքն որ յաճախ բորբաձև է, նոյն գործարանի նրբագոյն մասն է: Ցնցողք որ ասոնց մէջ կը ճիւղաբաժանին՝ երկու կերպով կրնան վերջանալ. ունէք՝ 'ի Մարգրէ և 'ի Ստնաորս եղող խորշերէ աւելի լայն խորշեր կը կազմեն (Չև 53). Իսկ այլք երկընչայով մաղի ծակերու նման թոքերու վրայ կը բացուին. միանգամայն մեծամեծ խորշերն և նո-




Չև 53. Հառ թոքերն

հաղորդակցութեան մէջ են: Բայց որովհետև թոչուռք միջոցային մկուռք և առաջատար չունին, այն պատճառաւ իրենց շնչառութեան յօրինուածն ալ կը տարբերի: Շնչառութեան համար կողերնին կը շարժեն, որոց մի ծայրն ողնայարի և միւսն լանջակեր վրայ յղաւորեալ են. հետևաբար զլանջակեր շարունակ ողնայարին կը մերձեցնեն և կամ իջ հեռացնեն:

74. Թոչուռքն պարկի — Չեռուռք թոքային պարկերու ձեռք իրենց շնչառութիւնն կը կատարեն: Այոնք պարզագոյն գործարանք են. խորշային հիւստած է չեն բաղկանար, այլ երկու մեծ պարկերէ՝ որոց յընապատեց վրայ ա-

բիւնակալ անօթք կը ճիւղաբաժանին: Վերջիլ-
չեպ կենդանիք այս ընդունարանաց մէջ յա-
տուկ եղանակաւ զօդ կ'ամպարեն, այսինքն,
ինչպէս զկերակուրս' նոյնպէս նաև զօդ կը կլինեն,
և այնու իրենց թարային պարկերն կը լնուն:
Քաղցմաթիւ Չեռուք թէ՛ ցամաքային են և թէ՛
ջրային. բայց նոյն իսկ ջրոց մէջ ապրելով՝ զլընչ-
ատ ու թուն թոքերով կը կատարեն, և ներշնչե-
լու համար ջրոց երեսը կը բարձրանան: Ասոնց-
մէ շատերն, ինչպէս Գորտագիթք՝ կողոր շունին.
որով ներշնչելու և շնարձակելու համար Ստնա-
ւորոց և Թոշնոց պէս կուրծքերին չեն ծառա-



Չև 54. Միջտօր մի շնչառութեան գործարանքն


1. Գլուխ. 2. Արմատ առաջին զոյգ թաթից: 3
Առաջին օտակ կրծոց: 4. Թևոց արմատն: 5. Ար-
մատ երկրորդ զոյգ թաթից: 6. Շնչառութք: 7. Շնչա-
ձակք: 8. Օղային փամփուշոց:

յեղըներ: Այլ սակայն թորային շնչառութիւնն
այս կենդանեաց կենաց համար անհրաժեշտ
հարկաւոր չէ. վասն զի եթէ թութերնին կարենք՝
մերթային շնչառութեամբ դարձեալ կրնան ա-
պրիլ: Գորտերու թոքերն կարելով և զանոնք
խոնաւ աւազի մէջ պահելով այս կենդանիք
մինչև քառասուն օր կրցան ապրիլ. իսկ ջրոց հո-
սանաց մէջ ընկզմելով՝ շատ ամիսներ ապրե-
ցան:

75. Շնչառօքք. — Միջտօք օղային շնչառու

թիւն ունեցող կենդանիք են, և իրենց այս գոր-
ծառնութիւնն ներքին րաղմաթիւ անցքերով կը
կատարեն՝ որք շնչառօքք կ'անուանին: Շնչա-
նօթք՝ արտաքուստ կենդանոյն կողմց վրայ շն-
չառակօր կը բացուին (Չև 54), և այս բացուած-
քն եղիւրեայ մտնեկաւ շրջապատած օղակ մի
ձևն ունին: Շնչածակք երկու տեսակ են, սրարգ
և բարայրեայ. սրարգք իրենց բացուածքն առ-
ջև մագձուկք ունին՝ որք օտար նիւթոց շնչա-
նօթից մէջ մուտքն կ'արգելուն. իսկ բարայր-
րեայք՝ զէպ 'ի դուրս բացուող երկու եղիւրեայ
մասունք ունին, և կենդանին ներշնչելու միջոց
միշտ զատնք կը շարժէ: Պարզ շնչածակք՝ սո-
վորաբար որովայնի կողմնակի մասանց վրայ կը
գտնուին. իսկ բարայրեայք՝ միշտ կրծոց վրայ:
Կենդանին շնչածակաց միջնորդութեամբ զօդ
կ'ընդունի և շնչանօթից ձեռք զայն բուր գոր-
ծարանաց մէջ կը տարածէ:

76. Խտիկք. — Չկուքք, բաղմաթիւ խեցե-
մորթք և կակղամորթք ջրային շնչառութիւն ու-
նին և զայն խտիկեղով կը կատարեն: Չկանց
մէջ այս գործարանք յարձնաթաղանթով ծած-
կուած յազմաթիւ շերտերէ կը բաղկանան՝ որք
առաջին ողանց հետ յօդաւորեայ կամարաց վրայ
յեցած՝ և կամ գանկին խարսխէն միւրեքներով
առկախեալ են (Չև 55): Չուկն զբերան կը բա-
նայ, և լեզուային ոսկրն իւր յարակից մասամբ
'ի վայր խոնարհեցընելով՝ բերանային խոռոչն
կ'ընդարձակէ, սրով և հետևաբար ջուրն անոր



Չև 55. Կածան Չկան խտիկքն

մէջ կը հոսի: Նոյն միջոց զըրթունս՝ իրերաց կը
մերձեցընէ և կը փակէ, և բերնի յատակն բար-
ձրացընելով ջուրը զէպ 'ի խոչակերտան կ'ըն-
թանայ՝ որ զխոխիներն կը բածնէ: Հոն քիչ մի
կենալէ յետոյ, երբ կենդանին վերստին զրե-
րան կը բանայ ջուր առնելու համար, մի և նոյն
վայրկենին խփանն կը բացուի և առջի ջուրն
դուրս կ'ելայ:

Վերայիշեալ միտ կենդանեաց մէջ այս գոր-
ծարանք թէ՛ ձևով և թէ՛ գրիւք յիբրեաց շատ կը
տարբերին. կրբեմն չերտաձև են, բայց շատ ան-
զամ ցցունից, ծոպից, և փնջոց կը նմանին
(Չև 56):

խախք սովորաբար ներքուստ են, միայն քանի մի կենդանեաց մէջ արտաբուստ: Երակային արևնն սանցնով չրոյ մէջ լուծեալ օդոյ ազդեցութիւնը կը կրէ, և ՚ի շնչերակային արիւն կը փոխարկի:


77. Ջրատար շնչաւորք. — Հասկ ուրեմն, ստորին գասու բազմութիւ ջրային կենդանեաց շնչաութիւնն, օրինակ իմն Արդանց ջրատար շնչաւորից ձևօք կը կատարուի: Այնք Միշատաց շնչանոթից կը նմանին, միայն այս տարբերութեամբ՝ որ շնչանօթը կենդանւոյն գործարանաց մէջ ազատ օդ կը մտցընեն, մինչև ջրատար շնչանօթք՝ չրոյ մէջ լուծեալ օդ կը տանին:

78. Մորրային շնչաուորիւն. — Ինչպէս ըսինք, ստորնագոյն գասու կենդանիք որք թոք, ոչ շնչանօթք և ոչ խախք ունին, շնչաութիւնն ինն մորթով կը կատարեն, և մորրային շրջաւորիւն ունեցող կենդանիք կ'անուանին: Բաց սանց՝ թոքային և խախային շնչաուորիւն ունեցող բազմութիւ կենդանեաց մէջ, նոյն մորթին միանգամայն շնչաութեան գործարանի պաշտօն ալ կը կատարէ: Օդն՝ զոր իրենց մորթով կը ներշնչեն, իւր թթուածինն կը կորսնցընէ և ածխածնական թթուութիւ կը յազենայ. որով շնչաութեան գործարաններէ անց նոյ օդոյ նման՝ մի և նոյն փոփոխութեանց ենթակայ է: Այս երևոյթս կը նկատենք զխաւորաբար լերկամորթ Գորտազգեաց մէջ. ինչպէս են, օրինակ իմն Գորտք (Չև 57), Գօղօք, և այլն: Վասն զի վերոյիշեալ կենդանիք հարկւրամասն յերմաշափի մինչև 910 բարեխառնութեան միջոց, և մանաւանդ այնանային և ձևօնային եղանակաց մէջ, շարթնեքով և ամիսներով չրոյց տակ կը բնակին առանց թոքերու շնչաութիւննին կատարելու. այլ պարզապէս իւրենց այն լերկ մորթով՝ որ բազմապիւն անօթիք ծածկեալ է: Իսկ երբ օդոյ բարեխառնութիւնն 10° բարձրանայ՝ այն առեն միայն թոքերով շնչաութիւննին կը կատարեն: Մասնաւոր թէ այս կենդանեաց կենաց պահպանութեան համար մորթային շնչաութիւնն ՚ի վեր է քան թոքային շնչաութիւնն. որովհետև առանց թոքերու աւելի երկար կ'ապրին, քան թոքերով առանց մորթային շնչաութեան:

Գարձեալ, մորթային շնչաութիւն ունին Մողիզազգիք, Օձազգիք (Չև 58) և Կրայազգիք. նոյն իսկ Չիուք, և սահմանեալ շարիով նաև թռչունք և Սանաւորք:

79. Յօրինուած շնչաուորիւն. — Ենչաութիւնն երեք զլիւսուր երկայններէ կը բաղկանայ. որք են, Ա. Արտաքին օդոյ մուտքն շնչաութիւնն գործարանաց մէջ. Բ. Մի և նոյն կայ արեան իրայ կատարած փոփոխութիւնն. Գ. Իւր ազդեցութիւնն կատարելէ յետոյ վե-

րըստին ՚ի մարմնոյ արտաքսիլն: Առաջինն է ներշնչաւորիւն. երկրորդն՝ երակային արևան ՚ի շնչերակային արևն փոխարկիլն. իսկ երրորդն շնչարձակութիւնն:



Չև 56. Օղակազգեաց խոխիւնն

Արեմն ներշնչութիւնն է՝ օդոյ մուտքն թոքերու մէջ. հետևաբար յատուկ գզացում մի կը պատճառէ, և քանի մի մկնային գործադութեամբ կը կատարուի: Այս գզացումն ցնցողներու յորձնաթաղանթին մէջ կը ծագի, և մի և նոյն ժամանակ մկնային գործութեամբ լանձքն ընդարձակելով՝ օդոյ մտից տեղիք կու տայ:

Բազմութիւն մկնայց լանձոց ընդարձակելուն կ'օգնեն. սակայն յաճախ ասոր պատճառով առաջատի վերէն դէպ ՚ի վար կատարած շարժումն է: Այնու հանդերձ ներշնչութիւնն կրնայ կախումն ունենալ նաև կողից և լանջուակեր բարձրանալէն՝ միջնոցային կաշուած մկանց ձևօք. և քանի մի բաւաղասեալ ներշնչութեան դիպաց մէջ՝ միջնոցային մկանց հետ զանազան մկուները ալ կը գործեն. յորոց ամանք՝ պարանոցի, զիսկ և ուսոց հետ միացեալ են, իսկ այլք լանձոց հետ:


Մկնայց ձևօք ըստ լատիոյ ընդարձակելոյ լանձոց թոքերն ալ որ ստոր կից են՝ հաւատարմայն կ'ընդարձակին. այն առեն ներքին օդն կ'անցադատանայ և տրասքին օդոյ հետ հաւատարկուութեան մէջ շննալով յետինս իսկոյն դէպ ՚ի խաչակերան կը մղուի և թոքերու մինչև ներքուստ խոռոչք կը թափանցէ: Արդ, մտնելով միանգամ օդն թոքերու մէջ՝



Չև 57. Գորտք

իւր յատկութեանցն համեմատ նոյն գործարանաց լորձնաթաղանթին վրայ արտոթելի և կամ դժնդակ ազդեցութիւն մի կը կատարէ: Յետոյ՝ ներշնչոյ մկանց թալանարմիւ, կողային աճառայ սառնագութեամբ, երբեմն նաև շրջ-

արձակող մկանց գործունէութեամբ, կողերն և լանջուկներն իսկոյն կը խոնարհին. և առագաստն վերստին ընդարձակելով դէպ'ի կուրծք կը մղուի՝ որ առաջի դիրքն կը ստանայ: Արդ, այս շնչարձակութեան միջոց՝ թոքն որ ընդարձակած էր՝ կ'ամրոպի, և գրեթէ ներշնչած օդոյ քանակին չափ օդ արտադր կու տայ: Սակայն պէտք է գիտնալ որ զլիսաւորաբար այս գործարանն է որ իւր առածգութեամբ տեսակ մի շնչուղութիւն ներգործելով առագաստի վրայ՝ զայն մինչև կրծային խոռոչն կը բարձրացնէ, և այսու առագաստն այնպիսի դիրք մի կը ստանայ՝ որ կարենայ վերստին ներշնչել:



Ձև 58. Նայա

80. Էրևոյոյք շնչարձակում. — Կը մնայ արդ խօսել մեզ համառօտիւ շնչառութեան վերաբերեալ քանի մի երևութից վրայ, որք են յօրանլումն, հասալանք, հեծկոտք, փարգտումն, հազ, ծիծաղ, հեծկոտակք:

Յօրանլումն մեծ, զօրաւոր, երկայն և ակամայ ներշնչութիւն մի է, որոյ երկարեալ և յաճախ մեծածայն արտաշնչութիւն մի կը յաջորդէ: Գօրանլումն միջոց օրոյ ելից տեղիք շտաղու համար, քմայց պատրուակում որ ստուգարերն նի առջև կը գտնուի, ռնգային անցքերն՝ կը փակուին: Այս քմաց պատրուակի ձգտումն՝ յօրանլումն սկզբնաւորութենէն և բերնի թեթև կերպով մի բացուելէն կը սկսի, և մինչև ցրտաւորումն կը տեսէ՝ երբ միանգամայն բերանն ալ կը փակի:

Հասալանքն՝ գտնողազ և երկար ներշնչութիւն մի է՝ որոյ երազ և ձայնարձակ շնչարձակութիւն մի կը յաջորդէ: Ատիկայ լանջաց մէջ մեծաքանակ

օդ մտցնելու կարեւորութենէ յառաջ կու գայ, որպէս զի արեան շրմանի և շնչառութեան մէջ հաւասարակութիւնն կարենայ պահուիլ. փաստն զի բարոյական տխուր աղքեցութիւնք՝ զշնչառութիւն կը տկարացնեն: Հառաչանքն յօրանլումնէ ոյտու կը տարբերի, որ առաջինն՝ ի վտանգ է ի տարութենէ կը ծագի, մինչդեռ յետինս ձանձրութեան հետևանք է:

Հեծկոտակքն՝ առագաստի ստուգնական, ուժգին և ակամայ կծկումն մի է, որ խոչակերբնի կծկման հետ մէկտեղ կը կատարի: Ատիկայ օրովայնային խոռոչներու խիտ կծկումն, միանգամայն յատուկ երկերեքածայն կը պատճառէ: Փարնգտումն՝ շնչարձակող մկանց յանկարծազատ և ցնցական շարժումն է, որով օրն երազութեամբ մղուելով՝ ռնգային խորշերու ծամածռու շրջապատից կ'ընդհարկանի. հոն ուժովիեկ ձայն մի կը պատճառէ, և մտղասային թաղանթի խիւնքն կը ձգէ: Փորնգտման պատճառն յղային դրութեան մէջ է. սակայն իւր սկզբնական զբոգումն՝ սովորաբար մաղասային թաղանթաց զրգումանէ կը ծագի:

Հազն բուռն և ձայնարձակ. սուղ և ստէպ շնչարձակութենէ յառաջ կու գայ: Ատիկայ ցընցղաթեպային ըրձնաթաղանթի զրգումանէ կը ծագի, որոյ պատճառ կ'ըլլան խուխ, բորբոքումն, օտար մարմին, և այլն: Այտից ցումն՝ զօր շարունակեալ և բուռն հազէ ետքն կը զգանք՝ առագաստի յօգնածութենէ կատուումն ունի:

Երկար ներշնչութիւն մի է, որոյ կը յաջորդեն սուղ, ցնցող, անկատար և բարձրաձայն ներշնչութիւնք. ասոնցմէ վերջն դարձեալ նոր ներշնչութիւն մի կը սկսի, որոյ կը յաջորդեն մասնական ներշնչութիւնք: Երկարի հընչիւնն՝ ձայնական աղեաց և կամ միանգամայն քմաց յետակողմեան թաղանթաց թրթմումանէն կատուումն ունի. և ծիծաղն կատարեալ չհամարուի՝ եթէ իւր հետ միացած ըլլայ նաև դիմաց գծագրութեան փթիթ մի: Չափազանց ծիծաղն՝ որովայնային մկանց կողերու հետ ազուցման տեղոյն մէջ ցու կը պատճառէ:

Հեծկոտակքն առագաստի ստուգնական ակամայ կծկումն է, որ ներշնչութեան և շնչարձակութեան փոփոխակի և արագ արագ շարժմանց միջոց՝ յատուկ ձայնով կը կատարուի: Այս երևույթն օժիժաղէ քիչ կը տարբերի սակայն հոգւոյն բոլորովին տարբեր վիճակն կ'արտայայտէ:

81. Շնչապատարիւն. — Երբ Մարգար իւր գլուխ իրանից կամ շնչարգէ ըլլայ, և կամ որ և իցէ եղանակաւ մթնոլորտային զուտ և մաքուր օդ կարենայ ներշնչել կամ շնչարձակել՝ կ'աննշանայ, և այս երևույթն շնչապատարիւն կ'անուանուի: Նոյն անձի երեզն կը կապուտակին, երակներն կ'ուռին, ցնցական շարժմանց հետ սնդղայականութիւնն կը յայտնուի, և ահա քանի մի վայրկենէ ետև կը մեռնի: Սա

կայն զնչասպառութիւն երկու տեսակ կըր-
նանք զունագանել. մին ստոյգ շնչասպառորիւն՝
որ թթուածնի պակասութենէ յառաջ կու գայ,
իսկ միւսն՝ ճիշդ խօսելով՝ քունառորորիւն, ինչ-
պէս քլորիւ, ժահրով, և այլն:

Այսպէս օրինակ իմն, եթէ օդաշնան մեքե-
նայի զանգակին տակ թռչուն մի զնենք և զօդ
զատարկենք, յայտ է թէ թթուածնի պակասելով
կենդանին շնչասպառ կը մեռնի: Եւ կամ գար-
ձեւը, երբ փոխանակ թթուածնի՝ ամիսանա-
կան թթուառ ներշնչէ կենդանի մի, այս կազն
թէ և յինքնան թունաւոր չէ, սակայն կենդա-



Չև 59. Վագերածի

նայն շնչատութեան գործարանաց մէջ թթուա-
ծրնի գրաւելու տեղին ինքն գրաւելով, առաջ-
նայն նման այս ալ շնչասպառ կը մեռնի: Ու-
րեմն այս կենդանի թթուածնի պակասութենէ
յառաջ կու գան, և ստոյգ շնչասպառորիւն
կ'ըստին:

Բայց երբ կենդանի մը քլոր, զառիկային զո-
րօրչիք և կամ որ և է թունաւոր կազ ներշնչ-
չէ, թէ և այս զէպքիս մէջ ալ կը շնչասպառի,



Չև 60. Բու

սակայն ճիշդ խօսելով ստիկոյ քունառորորիւն
է: Վասն զի կենդանին զթոյն շնչելու միջոց
միտնգամայն թթուածին ալ կը ներշնչէ՝ որ ի-
րեն շնչատութեան կրնայ ծառայել. սակայն
փերայիեալ թոյնն իւր գործարանքն բոլորովին
կը խանգարէ և կ'ապականէ:

82. Կենդանական զերմորիւն. — Ամենայն
կենդանիք զերմութեան տափնան մի ունին, ու-
մանք առաւել, այլք նուազ. և զերմութեան առ-

տիճանն սովորաբար իրենց դոնուած տեղոյն
բարեխառնութեան աստիճանէն միշտ աւելի
բարձր է: Ասիկայ որ կենդանական զերմորիւն
կ'անուանի՝ շնչերակային արեան սղէ ծծած
թթուածնին և գործարանաց մէջ զտնուած ամ-
խածնի՝ իրարու վրայ կատարած տարբոսանա-
կան հակազդեցութենէ յառաջ կու գայ: Այս



Չև 61. Գայլածուկ

հակազդեցութիւնն՝ որով ամիսածնական թը-
թուառ կը ձևանայ, զոր կենդանին կը շնչա-
ծակէ, ստոյգ կրողմ մի է նման հնոցի մի մէջ
կատարուած կրգման. ուր կրկանելի նիւթն, այ-
սինքն սծ ուխն՝ օդոյ թթուածնին հետ կը միա-
նայ և զերմութիւն կը ծնանի, զոր ոչ որ կ'ան-
գիտանայ:

Արդ այն կենդանիք որ կրկին արեան շրջան և
երազ մարտողութիւն ունին, և թոքերու ձևուք
շնչատութիւնին կը կատարեն, զերմութեան
աստիճանին ալ բարձրագոյն է (Չև 59, 60):



Չև 62. Հարեկ

Բնոց հսկառակն անտեք որ արեան շրջանի և
շնչատութեան կատարեալ գործարանք չունին՝
զերմութեան աստիճանին ալ նուազ է. և առ-
սոնցմէ շատերն այն աստիճանի տակար զերմու-
թիւն կը ծնանին՝ զոր և ոչ մեր զերմուշակի գոր-
ծեօք կրնանք որոշել (Չև 61, 62, 63): Ասիկց ահա



Չև 63. Խոջէտի

կը ծողի զերմարիւն և զրաարիւն կենդանաց
զանագանութիւնն, զորս լատուոյն է նստառ-
տուն և փոխիտակական բարեխառնորիւն ունեցող
կենդանիք անուանել:

83. Չերմարիւն կամ Հաստատուն բարեխառ-
նորիւն ունեցող կենդանիք. — Չերմարիւն կեն-

դանիք, ինչպէս Թռչունք և Մտնաորք, որ և իցէ կլիմայի մէջ ալ գտնուելու ըլլան, իրենց բարեխառնութիւնն միշտ հաստատուն է, և նոյն տեղոյ բարեխառնութեան աստիճանէն շատ աւելի բարձր է (Չև 64, 65): Թռչունք Մտնաորայմէ աւելի ջերմութեան բարձրագոյնն աս.



Չև 64. Արագիւ

տիճան մի ունին, և արիկայ ըստ տեսակաց՝ հարիւրամասն ջերմաչափի 40°—44° կը փոփոխի. իսկ Մտնաորացն ըստ տեսակաց՝ մի և



Չև 65. Եկեռածիկ

նոյն ջերմաչափի 36°—40° ին կը համապատասխանէ: Սալայն Մարդո ուր տեղ ալ գտնուելու




Չև 66. Կովախոջ

որ ըլլայ, եթէ 'ի Սիդերիս' ուր ցրտութեան աստիճանն մինչև 70° կ'իջնայ, և եթէ 'ի Նիկիիա' ուր ջերմութիւնն մինչև 40° կը բարձրանայ, միշտ հաստատուն բարեխառնութեան աստիճանն մի ունի, որ հարիւրամասն ջերմաչափով 37°,8 կը ցուցնէ:

84. Յրատարին կամ փոփոխական բարեխառնութիւնն ունեցող կենդանիք. — Բաց 'ի Մտնաորաց և 'ի Թռչնոց' միւս մնացեալ կենդանիք Պրնս Գ.

հաստատուն բարեխառնութիւն մի չունին, այլ իրենց գտնուած տեղոյն փոփոխութեանց՝ հաստատուածքէ իրենք ալ ենթակայ են. սնոր համար ասոնք ցրտարին կամ լաւ ևս փոփոխական բարեխառնութիւնն ունեցող կենդանիք կ'անուանին: Այսպէս Չեռունք՝ իրենց գտնուած տեղոյն բարեխառնութեանն՝ աստիճանն մի միայն աւելի ջերմութիւնն ունին: Իսկ այլոց, ինչպէս Գորտերու բարեխառնութիւնն, երբեմն ճշդիւ արտաքին օդոյ բարեխառնութեան կը համա-



Չև 67. Թուխու


պատասխանէ. և նոյն իսկ կրնայ ըլլալ որ երբ չիէ դուրս ելլուն՝ թեթև կերպով մի բարեխառնութիւնն ալ նուազի: Այսպէս նաև Չկանց բարեխառնութեան աստիճանն իրենց ապրած իրոց բարեխառնութեան աստիճանէն քիչ մի բարձր է (Չև 66 և 67), այս ինքն 0°,5 կամ 1° է վեր չի բարձրանար, Գարձեալ Միջաօր, Կակ,

դամրթք (Չև 68 և 69) և խեցեմորթք 1° կամ 2° տարբերութիւն կը ներկայացընեն: Բայց քանի մի դիպաց մէջ Միջատաց և Չեռնոց բարեխառնութիւնն շատ կը բարձրանայ. օրինակ իմն, Մեռուք որ փեթակայ մէջ կ'ապրին և յձք որ իրենց հաւ նիթներն կը թխանն՝ արտաքին օդոյ բարեխառնութենէն 6, 7, 8 և մինչև 1) աստիճան տարբերութիւն կրնան ներկայացընել:

Սրոնցմէ գատ այն կենդանիք՝ որ գձմեռնային եղանակ տեսակ մի քնափութեամբ կ'անցընեն, ինչպէս Արճակուներ, Արջք (Չև 70), Խղարբ, Առնէտք, Չիղջք (Չև 71), Ոզնիք (Չև 72), և այլն, որք և ձմեռնային կենդանիք կ'անուանին, տարւոյն ամէն եղանակաց մէջ մի և նոյն շերտութիւնն չունին: Մասնա իրենց գատու կենդանեաց ունեցած բարեխառնութեան կը համապատասխանեն. իսկ ձմեռն՝ այս բարեխառնութիւնն արտաքոյ կարգի կը նուազի:

Թ. Չատուցումն

85. Չատուցումն. — Սննդեան զանազան գործառնութեանց վրայ խօսած միջոցնիս, բոլիք թէ այս գործառնութեանց ոմանք յատուկ նիթերու ձեռք կը կատարուին, որք են օրինակի համար տաղուկ, ստամբախոյզ, մաւնոյզ, ընդերաւնոյզ, մաղձ, և այլն:



Չև 68. Խղուռչ:

Արգ թէ՛ վերոյիշեալք և թէ՛ այլ քանի մի հիւթք՝ գոր չենք յիշատակած, մասնաւոր գեղձերի կը պատրաստուին, կարևոր եղած տարբերն աբրուեն իրենց ձգելով: Ահա ստակի այս հիւթոց պատրաստութիւնն՝ ՚ի Բնարանից յատուկ անուամբ գատուցումն կոչուած է:

86. Չատուցումն գործառնիք. — Ինչպէս որ բոլիք՝ հիւթոց գատուցումն գեղձք անուանեալ գործարանաց ձեռք կը կատարուի. և ասանք կազմուածքով իրերաց շատ կը տարբերին. այն պատճառաւ կատարելայն կամ ստոյգ գեղձք, և անկատար գեղձք կամ անօրակաւ ժղիկք բաժնուած են:



Չև 69. Սիւղ:

Կատարեալ կամ ստոյգ գեղձք՝ մնայուն կամ

պատահական կղկղանքք մի ունին՝ ուսկից իւրեանց գատուցած հիւթերն կ'արտաբռնեն. իսկ անկատար գեղձք՝ խոռոչի կը նմանին, կամ բացուածք չունեցող և առանց կղկղանքքի կարգի են, որք իրենց գատուցած հիւթերն ծծմամբ կամ խորտակմամբ արտաքս կը զեղուն:

Կատարեալ գեղձք զանազան ձևեր կրնան ունենայ, և այնու զանազան անուանաւ կը կրեն, ինչպէս փոռիկք կամ գեղձիկք, կոտակայ կամ ողիւռզածն գեղձք, փոդածն գեղձք, և այլն:

Արգ, գատուցումն կարևոր եղած տարբերք ամենայն գեղձերու՝ արիւնն կը տանի. և որչափ որ հեղուկ ըլլայ՝ այնչափ ևս գատուցումը առատ կ'ըլլան:

87. Չատուցումն քրտանց. — Քիրան կուտած հեղուկներն՝ քրտնաբեր գեղձերէ յատուկ կու գայ՝ որք մարմնոյն ամէն կողմն կը գտնուին և մորթոյն ամենայն մասանց վրայ տարածուած են: Առաջի հատիկներու կը նմանին՝ որ նրբագոյն թերով մաղկին կամ մորթոյն ներքին երեսին վրայ առկայեալ է: Այս թերն ինքն իր վրայ պարուրածն որբերով և գալարելով՝ մինչև մաղկի երեսն կու գայ և հոն կողմնակի կը բացուի (Չև 73): Քրտինքն քիչ մի թթուահամ հեղուկներ է. ըստ Ծավոյ՝ ՚ի քրտուկ նատրուեն, ՚ի քրտուկ կալիումն, զանազան աղերէ, ՚ի բնամիզէ և նոր բորակեալ թթուատէ մի կը բաղկանայ: Յետինն նատրոնի և կալիոնի հետ միացած է. որոյ ծագումն ցուցնելու համար Ծավո զայն քրտնեցոցի քրտուտ կը կոչէ:

88. Չատուցումն յորձմնադարկից. — Լորձնաթաղանթից մէջ յատուկ փշտիկներ կը զբտնուին՝ որք զլիկիք կը գատուցանեն. և որ թանձր, մատղոզ և ընդհանրապէս անհամ հիւթ մ'է՛ ձև կ'որոձմնաթաղանթն գրգռել մարմնաց աղդեպութենէ կը պաշտպանէ:

89. Բայց ՚ի վերոյիշելոց, զարձեալ գատուցման կը վերաբերին այն ամենայն գործողութիւնք, որովք ՚ի բնութեան գտնուող անօրտակար և բազմաուտ հիւթերն սլլ և սլլ միջոցներով՝ ՚ի մորմնոյ կ'արտաբռնեն: Այս միջոցք բազմաթիւ և զանազան են. օրինակ իմն ճնաստորիկն՝ որով ամխածնական թթուատի կերպարանօք՝ բազմաբանակ ամխածին կը շնարձակելք. մորթային արտաժորտուի և գոքային արտաբռնչոյրիկն՝ որոց միջոցաւ առատ ջուր գուր կու տանք. շարակցական հիւտուածի մէջ է արպոյ հաւաքիւն, և այլն:


Ժ. Խրսցումն

90. Խրսցումն. — Կենդանեաց կերած անդարար հիւթերն արիւն գառնայէ յետոյ, հուակ ուրեմն նոյն կենդանւոյն գործարանքն կազմող հիւթոց կը փոխարկին. այսու վերո-

յիշեալ գործարանք ըստ պատշաճի կ'անին և անեղծ կը մնան: Ահաւասիկ սննդարար հիւթոց այսպիսի փոխակերպութիւն մի կրենք՝ յարացումն կը կոչի:

Գործարանք զլիւսոր յածխածնէ, 'ի բորակածնէ, 'ի ջրածնէ և 'ի թթուածնէ՝ կը բաղկանան. սակայն յաճախ ասոնց կազմութեան

մէջ նաև ծծումբ, լուսածին, կրածին և այլ պարզ մարմինք կը գտնուին: Ուրեմն, աստի կը հետևի թէ սննդարար կերակուրք օգտակար ըլլալու համար, պէտք է որ իրենց մէջ ածխածին, բորակածին, ջրածին, թթուածին, յաճախ ևս ծծումբ, լուսածին, և այլ տարիք բուսականներն, որպէս զի կարեւորն ըստ պատշաճի



Ձև 70. Արջ

կենդանոյն պիտոյքն ընուլ (Տես § 11):


Այս ամէն տարեք, ինչպէս ուրիշ տեղ խօսեցանք, մարտողութիւնն կատարուելէ յետոյ արեան հետ կը միանան և զարին կը կազմեն: Արիւնն իւր շրջանն սկսելով՝ ամենայն անդամոց իրենց կարեւոր եղածը կը մատակարարէ, որպէս զի կարեւորն տնիլ և սնեղծ մնալ: Ատորսնոր նիւթք, որ կենդանական հիւսուածոց

բաղադրութեան մէջ պիտի մտնեն, արդէն սննդարար հեղանիւթոյն մէջ կազմուած կը գտնուին, և կամ անոր մէջ բովանդակուող հիւթոց փոխակերպութեամբ հետզհետէ նոր կը ձևանան: Հոսկ ուրեմն, կենդանական հիւսուածք կերպով մի այս սննդարար հեղանիւթոյն մէջէն իրենց կարեւորքն կ'ընտրեն և ինքեանց կ'իւրացնեն:



Ձև 71. Չիլը

91. Չենք զիտեր ամենեւին թէ իւրացումն ինչպէս կը կատարուի, և թէ սննդարար հիւթք ինչ եղանակաւ արիւնակալ անօթներէ կ'անցնին, և իրենց մերձակալ գտնուող հաստատուն մասանց խորը կը թափանցեն. ուր նոյն անգամը կազմող տարեբաց մի մասն կը թողուն, իսկ զմնացածն աւալին անօթք ծծելով վերստ




Ձև 72. Ուժի

տին արեան հետ կը խառնեն: Ասկայն ինչ պատճառաւ այս ինչ հիւսուածն որ զլիւսորաբար նեարդիտէ բաղկացած է, արիւնէն նեարդիտ միայն յինքն կը ձգէ, մինչդեռ ուրիշ մի որ մեծաւ մասամբ 'ի սպիտէ կը բաղկանայ, սննդարար հեղանիւթէն առաւել այն տարրը կ'իւրացնէ, և երբորդ մի որ կրային

աղերէ կը ձևանայ՝ զանոնք միայն կը սեփա-
կանէ:

Ասոնք և դեռ ստոնց նման քանի մի խըն-
դիրք կը գտնուին, զորս մինչև ցարդ լուծելն
անհնար եղած է, և բնու որոշ պատասխան
մի պիտոր չկարենան սալ:



Ձև 75.

Գրանաբեր գեղջը ձևաց

Ե և Ի. Չգեղջը ձևացնող գալարուն խողովակք՝ որք
միանգամայն երկու փողբ կը կազմեն, և ուրտան անց-
քով մը իրարու հետ կը միանան, զգերամաճի Բ կէտով
կը ծակեն և Ա մակերևութի վրայ կը բացուին: —
Դ և Զ. Գեղջը ծածկող ճարպակն փամփուլք:

Գ Լ Ո Ի Խ Գ

ՄԵՆԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

92. Իրենդագործոտրիւն. — Այնուայն կենդա-
նիք իրենց տեսակի անհատներէ յառաջ կու
գան. և ամէնքն՝ եթէ յարմար գրից մէջ գըտ-
նուին, կրնան իրենց նման ուրիշ անհատներ
յառաջ բերել: Ահաւասիկ այս կարողութիւնն
ժենդագործոտրիւն կ'անուանի. և այսու աշխար-
հիս վրայ ստեղծեալ կենդանեաց տեսակք դեռ
մինչև ցայսօր կը յարատեւեն, քանի որ մար-
դուս ձեռքք և կամ բնական պատճառքք՝ մի և
նոյն տեսակի անհատք բուրբովին չեն ջնջուած:

Ի բաց առեալ յետին դասուց քանի մի կեն-
դանեաց տեսակքն, մնացեալք սովորաբար յու-
տակ ծննդական սնդամ ունին: Այս անգամ-
քըն այլ և այլ անհատից մէջ տարբերելով՝ սեռի
զանադանութիւնն կը ծագի. և այնու տեսակի
մի անհատք յարու և յից կ'որոշին:

93. Էղանակը ժենդագործոտրեան. — Մեզ
ծանօթ եղող բազմաթիւ կենդանեաց կազմա-
կերպութիւնն յիբրեաց տարբերելով, իրենց
ծննդագործութեանց եղանակն ալ կը գանա-
ղանի: Գլխաւորաբար երկու է, սրաց խրաքան-
չիւրն հետեւեալ կերպով կը ստորաբաժանի:

- | | | |
|-----------|---|-------------------|
| Ա. ՍԵՐԱՅՆ | } | Ս. Կենդանածին |
| | | Բ. Չուածին |
| | | Գ. Չուսկենդանածին |
| Բ. ԱՆՍԵՐ | } | Ս. Բարդածին |
| | | Բ. Պոկածին |
| | | Գ. Հերձածին |

Առաջին եղանակն սերական կ'անուանի, վա-
սրն զի այս դասու կենդանիք ծննդագործու-
թեան անգամք ունին. և հետևաբար՝ ընդհա-
նոր խօսելով, մէջերնին սեռի զանազանու-
թիւն կը գտնուի: Երկրորդ եղանակն անսեր
կ'ըսուի, որովհետև ասոնք ծննդագործութեան
անգամք չունին, և մէջերնին սեռի զանազա-
նութիւն չի նկատուիր:

94. Կենդանածին ժենդագործոտրիւն. — Կեն-
դանածին ծննդագործութիւնն հակթով կը կա-
տարուի. որոյ մէջ թէպէտ և նոր ծնանելի կեն-
դանույն սաղմն կը գտնուի, սակայն իւր ամման
և կենաց պահպանութեան համար պէտք եղած
անդարար նիւթերն չեն գտնուիր: Այս պատ-
ճառաւ հակթիթն մօր արգանդի մէջ սաղմա-
նեալ միջոց մի կը կենայ, և սաղմն իւր կատա-
րեալ կազմութիւնն ստանալու համար մօրէն
պէտք եղած անուղը կ'առնու. որով և անհա-
տըն կենդանի կը ծնանի: Այսպէս կը ծննդա-

գործեն Ստնաւորք, օրինակ իմն, Ոչխարք
Խոզք, Եունք, Քարայծք (Չև 74), և այլն:

95. Չուածին ծննդագործութիւն. — Չուածին
ծննդագործութեամբ կենդանիք հաւկիթէ կը
ծնանին: Այս հաւկիթներն իրենց մէջ միմե-
զամայն թէ՛ դազմն և թէ՛ անհատի կատարեալ



Չև 74. Քարայծ

կազմութեան համար կարևոր եղած սննդարար
նիւթերն կը պարունակեն. և երբ յարմար գրից
մէջ գտնուին, սաղմն՝ որոշեալ ժամանակէ մի
յետոյ՝ իւր կատարեալ կազմութիւնն կը ստա-
նայ և կը ծնանի:



Չև 75. Գեղձաճիկ

Այս գիւղերն ըստ ձուռց և ըստ կենդանեաց
կը տարբերին: Օրինակ իմն Թուչնոց (Չև 75 և
76) հաւկիթքն ձեանալու համար, բնական կամ
արուեստական ջերմութիւն մի կարևոր է: Բը-




Չև 76 ձնեղակ սպիտակափող

նական ջերմութիւնն է կենդանւոյն թուխն.
նոյն միջոց էզը հաւկիթներու վրայէն չելլեր՝
վախնալով թէ՛ դուրէ պաղին, և ձագունք որ
ձեանալ սկսած են՝ մեռնին: Այս պատճառաւ

էզն թխած ատեն իւր կերակուրն արուն կը
բերէ:


Բայց արդի ժամանակս Հաւուց, Բաղերու,
և այլ ստնոց նման ընտանի Թուչնոց ձագունքն
արուեստի կը հանեն. այսինքն է թխանայր (Չև
77) անուանեալ գործոյն մէջ հաւկիթքն ար-
ւեստական ջերմութեան կ'ենթարկեն, գրեթէ
մինչև 30° բարեխառնութիւնն հաստատուն
պահելով: Սակայն ձագերն ծնանելէ յետոյ
մեծ խնամքով անոնց կերակուր պէտք է մա-
տակարարել, և զգուշանալ որ պաղ շառնուն
(Չև 78):

Կրկայց (Չև 79), Մողիզաց և Օձերու հաւ-
կիթք՝ Թուչնոց հաւկիթներու կը նմանին, սա-
կայն կրային պտտեան չունին: Այս կենդա-
նիք չեն թխսեր, որովհետև ջերմութիւն ալ չու-
նին. բայց որպէս զի ձագերնին ծնանի՝ կամ



Չև 77. Թխամայր գործի

արեգակն առջև կամ տաք տեղ մի դայն կ'ա-
ծեն: Գորտք և Չկունք առանց պատենի հաւ-
կիթներ կ'ածեն, և ասոնց ձագերն լրոջ մէջ կը
ծնանին: Իսկ անկմայր կենդանեաց հաւկիթ



Չև 78. Վանգակ Հաւու նորածին ձագուց


ներն զանազան ձևեր կ'ունենան. ինչպէս ար-
զէն բազմաց ծանօթ է Թիթեռներունն, (Չև
80), զորս տերեւոց կամ ճիւղոց վրայ կ'ածեն,
և Խողունջներունն (Չև 81), որք ողկուզաց կը
նմանին, և այլն:

96. Չուակենդանածին ծննդագործութիւն. —
Չուակենդանածին ծննդագործութիւնն ձուա-
ծին ծննդագործութեանէ էսպէս չի տարբերի:
Հաւկիթքն, որ ձուածին ծննդագործութիւն
ունեցող կենդանեաց հաւկիթներուն կը նմա-

նին, մօր արգանդի մէջ իրենց կազմութեան համար կարևոր եղող ամենայն յարմար դիրքերն գտնելով՝ հոն կատարելապէս կը ձևանան. և յետոյ հաւկիթի պատենին հետ՝ միանալով նորածին կենդանին կը ծնան: Արով ձուակենդանածին ծննդագործութիւն ունեցող կենդանիք կերպով մի՛ իրենց հաւկիթները ներքուստ կը թխան:

Այսպէս կը բազմանան քանի մի Չեռունք, օրինակ իմն իտք (Ձև 82), քանի մի Չկունք և զանազան Միջատք, ինչպէս մտց կապտազոյն չանճերն, և այլն:


97. Բողոքածին ծննդագործութիւն. — Բողոքածին ծննդագործութիւնն զոր յետին դասու սակաւաթիւ կենդանեաց մէջ կը նկատենք, հետեւեալ եղանակու կը կատարուի: Երկու ան-



Ձև 79. Կրեաց

հաւք իրերաց հետ մերձադիմելով՝ կամաց կամաց ամրոզապէս կը միանան, և թաղանթ մի գիրենք արտաբուստ կը պատէ: Յետոյ ներքուստ ալ բոլորովին կը միանան և ՚ի մի կը փո-

Այսպիսի ծննդագործութեամբ բազմացող կենդանեաց շատերն՝ իրենց նախածնողաց հետ միացեալ կը մնան, որք հետզհետէ կ'աճին և կը մեծնան, ինչպէս կը տեսնենք ՚ի Փարամայրըս և ՚ի Բուստո: Սակայն կան նաև քանի մի տեսակ, որոց նորածինքն երբ կատարեալ կազմութիւն ստանան՝ ՚ի նախածնողաց բաժնուլով իրենց չրջակայքն գտնուող մարմնոց վրայ կը հաստատուին և առանձին կ'ապրին. այսպէս են, օրինակ իմն, անուշ ջրոց Բազմոտանիք, Փագաթնակեացք (Ձև 83) և այլն:



Ձև 80. Թիթեռն
Շերամի որդն և իւր հաւկիթքն

խարկին: Այս կծիկն անթիւ մանր կենդանեօք կը լքցուի, որք որդեալ ժամանակէ մի յետոյ զթաղանթը կը ծակեն և ջրոց մէջ կը սըփուին: Այսպէս են կրէկարիներ:



Ձև 82. Իտ



Ձև 81. Խղունք

99. Հիւճածին ծննդագործութիւն. — Հուսկ ուրեմն, հերձածին կ'անուանի ծննդագործութեան այն եղանակն՝ որով կենդանին մինչև սաղմունեալ աստիճան մի անելով՝ երկու մասն կը բաժնուի. այս մասունք քիչ առենէ՛ կրկին կատարեալ անհատից կը փոխարկին. ապա յետինք ևս ուրիշ անհատներ յառաջ կը բերեն, և հետզհետէ կը բազմանան: Այսպիսի ծննդագործութիւն ունեցող կենդանեաց սեռակցն սակաւաթիւ են, և կենդանաբանական յետին դասուց մէջ միայն կը գտնուին:

98. Պտկածին ծննդագործութիւն. — Պտկածին ծննդագործութեամբ՝ նորածին անհաւք իրենց նախածնողաց վրայ բուսնող բողբօջներէ կը ծնանին: Այս բողբօջն, որ բուսոց պատուկներու նման են, կենդանուց ամէն կողմն կրնան բուսնիլ. սակայն աւելի սոյն մատանց վրայ կ'իլլեն՝ ուր առատ սնունդ կ'աճուու:

Յանցելու՛մ դարու կատարուած քանի մի փորձեր՝ միանգամայն արդի Բնախօսներէ կրկնուելով, կը տեսնենք թէ՛ նոյն իսկ պտկածին ծննդագործութիւն ունեցող կենդանեաց ոմանք՝ հերձմամբ կրնան բազմանալ: Այսպէս, օրինակ

ինն՝ Ատեղք և վերջոյնեալ անոն չրոց Բագմ-
 ոտանիք, եթէ այրուեստական կերպով երկու
 կամ աւելի մասունք բաժնուելու ըլլան՝ այս մաս-
 սերն քիչ ժամանակի մէջ կը կատարելագոր-
 ծուին, և իւրացանչիւրն ստանձին անհաս կը
 ներկայացընէ. սակայն յայտ է թէ իրենք ի-
 րենց՝ հերձմամբ չեն անքի:

100. Կերպարանափոխութիւնք. — Ստնա-
 տրք, Թուշուք, Զեռուք, Զկուք, և այլն, ՚ի

ծննդենէ մինչև իրենց կենաց վերջն, առանց
 փոխակերպութեան՝ մարմնոյն ձևը միշտ մի և
 նոյն կը պահեն. սակայն իրենց անդամքն ըստ
 անման հասակին հետզհետէ կ'աճին և կ'ամրա-
 պնդին: Ընդ հակառակն Երկակենցաղք, ինչ-
 պէս օրինակ իմն, Գորսք, Սալամանդր, Մի-
 ջատք և այլ դասուց բազմաթիւ տեսակք, ՚ի
 ծննդեան տարբեր ձև մի ունին (Ձև 84). և
 քանի որ կը մեծանա՝ հետզհետէ որոշեալ և զս-



Ձև 83 Գագաթնակեացք



Ձև 84. Մեղուաց Թրթուր



Ձև 85. Մեղու

նագան փոփոխութիւնք կրելով, հուսկ ուրեմն
 ՚ի կատարելալ հասակի իրենց վերջին կերպա-
 րանքն կը ստանան (Ձև 85): Ահաւասիկ զայս
 Բնապատումը կերպարանափոխութիւն անուա-
 նած են:

Այս կերպարանափոխութեանց մէջ Գորտե-
 րունն ամենէն աւելի նշանաւոր և կատարեալն
 է (Ձև 86). Իրենց հակիթքն դռնդողային հիւ-
 թով մի իրարու հետ միացած՝ բոլորաձև կոյտե-
 րէ կը բաղկանան, որք գարնան սկզբը ճահիճ-
 ներու և առուակոց չրոց երեսը կը սկսին լու-
 դալ: Նոյն հակիթներէ ծնած կենդանին բոլո-
 րաձէ է, տափակ և երկայն պոչ մի ունի, և շերճ
 փիկ կ'ըսուի: Նորածինն՝ չրոց մէջ կենալով
 խոխիներու ձեռք լուծեալ օդ կը շնչէ: Խոխիք
 որք ՚ի սկզբան արտաբուստ են, կամաց կամաց
 զիտայն յետակողման կողմնակի խոռոչի մի մէջ
 կ'ամբիսին: և ասոնց՝ յատուկ բացուածքէ մի
 ջուր կը հանին: Բուսական նիւթերով կը սնա-
 նի, զորս իւր նեղ բերնին տեսակ մի եղջերեոյ
 կտուցովն կը մանրէ. և որովհետև ուրիշ անպա-
 շունի՝ պոչով միայն կը շարժի:

Քիչ ատենէ նախ յետակողման անդամքն
 կը ձևանան, ապա առաջակողմանքն. եղջե-
 րեայ կտուցն կը թփափի և անոր տեղ բերա-
 նըն կը փոխանակէ. փոխանակ խոխիներու՝
 թորքերն կը ձևանան. և հուսկ ուրեմն, ունեցած
 երկայն պոչն ՚ի ներքս կ'ամփոփի և կ'անկոյ-
 տանայ:

Եթէ Գորտերու կերպարանաց այլափոխու-
 թիւնքն այսքան հետաքրքրականք են, աւելի ևս
 մարդուս հետաքրքրութիւն կը շարժեն իրենց
 շնչատութեան, սննդեան և բնաբուրութեան
 մէջ կրած այլափոխութիւնքն: Նորածին կեն-
 դանին խոխիներով կը շնչէ, բուսելինք կը սը-
 նանի և միշտ չրոց մէջ կը լուղայ. ընդ հակա-
 ռակն Գորտն թորքերով կը շնչէ, մանր կենդա-
 նեք կը սնանի, և անդամք շարժումը կը կա-
 տարէ, թէ չրոց մէջ ընկղմելով, և թէ յաճախ
 ցամաք ելլելով՝ ուր կը հանգչի և իւր կերակուրն
 կը փնտռէ:


Զարմանալի են նաև Միջտոաց կերպարու-
 նափոխութիւններն, յորոց միայն գճեքամ կը
 յիշնք, որ հաւկլթէ ծնած ատեն գրեթէ

որդնաձև է և քրքուր (Չև 87) կը կոչուի. յետոյ կոնաձև պատենին մէջ ամփոփելով 'ի հարսնեակ (Չև 88 և 89) կը փոխարկի, և ասկից կատարեալ միջատ կ'եննէ, որ է բիրեռն (Չև 80):

Գրեթէ ամենայն Միջատք ասոնց նման կերպարանափոխութիւն կը կրեն:

101. Կատարեալ և անկատար կերպարանափոխարիւնք. — Կերպարանափոխութեան ենթակայ կենդանեաց ոմանք՝ կատարեալ կերպարանափոխութիւն կը կրեն, և այլք անկատար:

Կատարեալ կերպարանափոխարիւն կ'ըլլուի երբ Միջատի կենաց երեք զանազան շրջանքն



Չև 86. Կերպարանափոխութիւնք Գորտայ

1. Գորտայ ճակիթ: 2. Բեղմնաորեալ և փամփշտի մէջ ամփոփուած ճակիթ: 3. Առաջին վիճակ շեղեփիկ: 4. Շնչառութեան ծառայող խոփիներու երևում: 5. Շեղեփիկ խոփիներու ածուծ: 6. Յետակողմեան թափից ձևացում: 7. Առաջակողմեան թափից ձևացում: 8. Խոփիներու աստիճանաւոր անցյալանայն: 9. Թռչեբու ձևանայն, պոչի ամփոփիւն: 10. Կատարեալ Գորտայ

որոշակի կը կատարուին. այսինքն է, կենդանին նախ քրքուր (Չև 90, 91, 92) կ'ըլլայ, ապա հարսնեակ (Չև 93) և վերջապէս բիրեռն և կամ կատարեալ միջատ: Այսպէս են թիթեռք, Միջատք, ճանճք, և այլն: Ընդհակառակն անկատար կերպարանափոխութիւն կ'ըլլուի՝ կենդանեաց կազմուածոյն աստիճանաբար կրած փոփոխութիւնքն՝ առանց իւր գործունէութիւնն կորսնցնելու՝ 'ի հարսնեակ փոխարկելով: Այսպէս կ'ըլլայ, օրինակ իմն, Մարասնեռն, Մըզրիդներու, և այլն. որք 'ի ծննդեան թեք և ծննդական անդամք չունին, սակայն նոյն գործարանք յետոյ կամայ կամայ կը ձևանան. միւշգեռ կենդանին 'ի շարժմանէ և 'ի սնանկէ երբեք չի դադրիր:

102. փոփոխ ծննդապորժուրիւնք. — Այդի



Չև 88. Շերամբ հարսնեակ


չննողութիւնք կը ցուցնեն թէ քանի մի կենդանիք մէկ տեսակ ծննդապորժութեան եղանակ չունին. այլ ասոնցմէ ոմանք մէկ կերպով կը սերին, և իրենց ծնունդքն տարբեր կերպով կամ թէ բռնիք, ծննդապորժութեան երբ

կու և աւելի եղանակք՝ մի և նոյն տեսակի ան-
հատից յարորդութեան մէջ իրարու կը փոխա-
նակեն: Օրինակ իմն Երիզորդն (Ձև 94), որ ե-
րիզի ձև ունենալուն պատճառաւ այսպէս կը
կառուի, այնքան անհատներէ կը բաղկանայ՝ որ-
քան հատած բաժնուած է նոյն երիզն. և այս



Ձև 89. Ենրամ

անհատք՝ առաջին անհատէ, գոր ստորաբար
դուռի (Ձև 95) կ'անուանեն, պտկածին ծնըն-
դագործութեամբ կը սերին:




Ձև 91

Ձև 90. Թրթուր

Բղէգի Թրթուր

Նախ և առաջ գլուխն հատած մի կը ծնանի,
որ պտկածին ծննդագործութեամբ ձևացած
առաջին անհատն է. յետոյ՝ զլիսոյն և առաջին



Ձև 92. Թրթուր
(մանրագիտիւ մեծոցցած)



Ձև 93. Հարսնեակ

անհատի մէջ երկրորդ մի կը ձևանայ. ապա
երրորդ մի՝ միշտ կից զլիսոյն, որ և զվերս երկու
առաջինքն ՚ի վայր կը մղէ: Այսպէս ամէն ան-
գամ յետին ծնունդն անմիջապէս զլիսոյն հետ

միացեալ է : Իսկ ասոնցմէ վերջ ծնած ան-
հատք, այս ինքն հատածներէ յառաջ եկողք,
պտկածին ծննդագործութեամբ չեն սերիր՝ այլ
հաւկիթ է կը ծնանին: Բոյց յետոյ դարձեալ հա-
կըթ է յառաջ եկող անհատք՝ պտկածին ծննդա-
գործութեամբ կը բազմանան:

Բայտ սյամ կան քանի մի կեն-
դանիք որ այժմեան ստորագրած
հետաքրքրական և անկանոն ե-
ղանակաւ կը բազմանան. այս
պատճառաւ փոխիւ ծննդագոր-
ծութիւն ունեցող կենդանիք կո-
չուած են:


103. Ինքնարեր ծննդագործու-
րիւն. — Ինքնարեր ծննդագոր-
ծութիւն ըսելով՝ առանց նախա-
ծնողաց միջնորդութեան, իրենք
իրենցմէ գործարանաւոր մար-
միներ յառաջ դալ կը հասկնանք:

Փանի մի գիտնականք կը հա-
տատեն թէ այսպիսի ծննդա-
գործութիւն կրնայ ըլլայ, այլք
ոչ. սակայն մինչև զայսօր որչ
վճիռ մի դեռ չորոշեցաւ:

Բայտ ոմանց, պարզապէս ամ-
հաձնի, յրաձնի և թթուածնի
հիւլէից միութեամբ, որք զանա-
զան մարմիններէ յառաջ կու գան, ինչպէս
չաբարէ, խիժէ, սպիտէ, և այլն, ամենպարզ
կազմութիւն ունեցող գործարանաւոր մարմինք
կրնան ծնանիլ, և ասոնք յետոյ յանհունա կը



Ձև 94.
Երեւործ



Ձև 95. Գուռի Երեւործ

բազմանան: Օրինակ իմն, եթէ առնուիք վերո-
յիշեալ նիւթոց միոյն լուծումն, և զայն օդոյ
ներկայութեամբ քանի մի օր 12° — 25° բարև-
խառնութեան մէջ պահենք, կը տեսնենք որ
նոյն լուծման մէջ մանրադիտական փոքր կեն-
դանիք կը ձևանան: Շատ միջոցներով ջանա-
ցած են որ այս ծննդագործութեան ծառայող
օգր իւր մէջ բովանդակեալ նրբագոյն փոշիներէ
դատեն. վասն զի մանրադիտական գործարա-
նաւոր մարմնից ընձիւղք՝ միտ ասոնց մէջ կը
գտնուին. այլ ՚ի գուր. որով ՚ու և նոյն մար-
մինք նորէն կը ձևանան: Ի վերայ սոյր ամե-

նայնի չէ հնար բացարձակապէս հաստատել թէ կայ ինքնաբեր ծննդագործութիւն:

Մի և նոյն խնդիրն մեծաւ խնամք և ուշադրութեամբ արդի ժամանակս և մինչև ջարդ իսկ կենդանի եղող գիտնականագոյն անձանց մէջ քննուեցաւ՝ հանդերձ բազմաթիւ փորձերով սակայն դարձեալ անորոշ մնաց, և ընտա զայն չկրցան լուծել: Պատճառն է, վասն զի շեն կրնար որ և իցէ եղանակաւ օդոյ մէջ գտնուող մանրողիտական գործարանաւոր մարմնից ընձիւղքն կերպով մի արգելուլ՝ որ վերոյիշեալ լուծմանց վրայ չհասնին:

Կը շարունակուի:

Ի վախճանի՝ գիտելով թէ կատարեալ կազմութիւն ունեցող ամենայն կենդանիք, և անոնք ևս որ պարզ աչք կամ նոյն իսկ մանրադէտ գործեաց ձեռք յայտնի և որոշ կը տեսնուին, ամէնքն 'ի նախածնողաց' այս ինքն իրենց նման էակներէ յառաջ կու գան, առկից կը հետեցընենք թէ հասանական է՝ եթէ չըսենք ստույգ, որ նաև ամենապարզ կազմութիւն ունեցող մանրազնին գործարանաւոր մարմինք ևս, վերոյիշեաց նման պէտք է որ 'ի նախածնողաց սերին:

Հ. ՊԱՒՂՈՍ ԳՍՏԹԱՆ

ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՓՈՇԻ

(ՏԵՍ ԷՂ 191)



Պարզ անդրադարձութիւն մի բառական է իմանալու այսչափ փոշոյ պատճառը և աղբիւրը:

Նկատենք արդ տեսնել կոտք մը լըծեալ պոյգ մը ձիերով կամ եզամբք, և կամ թէ մարդ մը լինի որ մղէ զայն, և ընթանայ հանգարտաբար և կամ արագ. գիտենք երկաթուղոյ կառաց շարք մը, որ թիւ առած կարծես կը թըռչի ճամբուն ուղղութեամբ, ձգելով իւր հտակէն փոշոյ ամպ մը, որոյ մեծագոյն մասն դարձեալ յետ սակաւուց իւր տեղը կը դառնայ. իսկ միւս մասն մատնեալ օդոյ հոսանայ բըռնութեան՝ վերստին պիտի դառնայ հոն՝ ուսկից որ ելած էր, յետ երկար կամ կարճ, աւելի կամ նուազ օդաչու ճանապարհորդութեան:

Գարձեալ գիտենք որ և իցէ ծխան մը՝ երբ ծխէ. ծուխն ընդ իւր կը բարձրացրնէ զմուր և ուրիշ հաստատուն մարմիններ, և այս մարմիններն տարուբերելով օդոյ մէջ աստ և անդ՝ օրերով կը կենան դեանէն աւելի բարձր: Քանի մը քաղաքացի մէջ ուր արուեստական ձեռագործք շատ զարգացեալ են և հետևաբար գործատուներ բազմաթիւ և ձիւննելոյք շատ, օդն այս յետնոցս ար-

ձրկած մեծաքանակ ծուխին պատճառաւ՝ առանձին յատկութիւն մը կը ստանայ. ինչպէս օրինակ իմն Մէնչըսդըր և Նիւքասլ, Մեծին Բրիտանիոյ երկու ձեռագործական վաճառուց կողմանէ համբաւաւոր քաղաքներն. որոց օդն այս պատճառաւ լի է երկաթոյ թթուութեամբ, ծմբատ նատրոնիւ, և ուրիշ գործարանաւոր և անգործարան նիւթերով, զորս ամէնքն ալ սարքաբանական վերլուծութեամբ զտած են մտրոյ և միդի կազմութեան մէջ: Նմա նապէս նաև իտալական երկու յառաջացած քաղաքաց Գուրինի և Միլանո օդն ալ կը բովանդակէ երկաթոյ թթուութեամբ մագնիտացեալ մանրուք:

Հետաքրքրական դէպք մ'ալ՝ որ կը հանդիպի առանց բացատրութեան և ամէն տարի յունիս և յուլիս ամսոց մէջ՝ Ստորին Նահանգաց և Գերմանիոյ Հիւսիս-Սիւր-Սիւր-Սիւր մասին վրայ՝ հետեւեալն է: Ամէն տարի այն երկրին կալուածատէրերն սովոր են մայիս և յունիս ամսոց մէջ վառելու փոխանակ ամլայ՝ զՏոյալիոյն (tourbe), զոր կը ժողովն աշնան ժամանակ և կը չորցընեն ձմեռ ատեն. այս հողակոշան որ արդէն շատ ծուխ կ'արձրկէ, վառուե-